



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ	1
ՀՀ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	3
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	3
ՀՀ պետական բյուջեի եկամուտները	5
ՀՀ պետական բյուջեի ծախսերը	6
ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը	18
ՀՀ պետական պարտքը	19
ԱՄՓՈՓՈՒՄ	20

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Պետական բյուջեն տվյալ երկրի տնտեսության զարգացմանն ու կայունությանը, ինչպես նաև ֆինանսական դիրքերի բարելավմանն ուղղված ռազմավարական ծրագիր է: Պետական բյուջեի ուղղվածությունը, եկամտային և ծախսային ճշգրիտ բաշխվածությունը չափազանց կարևոր է, քանի որ դրանով է պայմանավորված երկրի ընթացիկ գործունեությունը և զարգացման հեռանկարները:

Ընդհանուր առմամբ հայտարարվել է, որ 2020թ. տնտեսական քաղաքականության հիմնական նպատակն է լինելու տնտեսության մրցունակության բարձրացումը: Հարկաբյուջետային քաղաքականությունը 2020-ին ամբողջական պահանջարկի վրա կունենա ընդլայնող ազդեցություն:

Գործող իշխանությունների կողմից 2020թ. բյուջեն անվանվել է աննախադեպ, հեղափոխական բյուջե: Սակայն, ուսումնասիրելով 2020թ. պետական բյուջեի մակրոտնտեսական կանխատեսումները, հիմնական ցուցանիշները, այս բյուջեն աննախադեպ, առավել ևս հեղափոխական չի կարող կոչվել: Այսպես.

2019թ. կանխատեսվող տնտեսական աճի ցուցանիշը 4.9%-ի փոխարեն կանխատեսվում է 6.3%: 2020թ. տնտեսական աճի տեմպը կնվազի՝ կազմելով 4.9%: Հարկ է նշել, որ 2019-2021թթ. ՄԺԾԾ-ում 2020թ. տնտեսական աճը կանխատեսվում էր 5.5%, իսկ 2018-2020թթ. ՄԺԾԾ-ում այն կազմում էր 5.7%: Ստացվում է, որ նոր կառավարության աշխատանքը սկսվելուց հետո, 2020թ. վերաբերյալ սպասումները աստիճանաբար վատթարացել են: Եթե նաև հաշվի առնենք այն փաստը, որ որևէ նշանակալի տնտեսական ցնցում չի գրանցվել վերջին երկու տարիներին (2018թ. քաղաքական իրադարձությունները հաշվի չառնելով), ապա կարող ենք նշել, որ տնտեսական աճի վերաբերյալ սպասումների փոփոխությունը կապված է միայն կառավարության գործունեության հետ:

Գնաճը (12 ամսյա) կպահպանվի ցածր մակարդակում՝ կազմելով 2.5%: Կառավարությունը, հիմք ընդունելով նախորդ տարիներին քաղաքականության ոլորտում բացահայտված հիմնախնդիրները, հայտարարել է այնպիսի հարկաբյուջետային քաղաքականություն, որը համահունչ լինի «ոսկե կանոնին», կայուն հիմքեր ստեղծի երկարաժամկետ տնտեսական աճի համար: Այս նպատակներն իրագործելու համար բյուջեի մշակման հիմքում դրվել են 2017-2018թթ. ընդունված և ուժի մեջ մտած հարկաբյուջետային կանոնները, համաձայն որոնց՝

կապիտալ ծախսերի մասնաբաժինը պետք է մեծացվի, և ընթացիկ ծախսերի աճը չպետք է գերազանցի նախորդ 7 տարիների ՀՆԱ-ի աճերի միջին մակարդակը: Վերջինս, սակայն, չի պահպանվել բյուջեի կազմման ընթացքում՝ հանգեցնելով բյուջետային համակարգի մասին օրենսդրության դրույթների խախտմանը: Այս մասին առավել մանրամասն կնշենք բյուջեի ծախսերի վերլուծության հատվածում:

Ստորև ներկայացնենք 2020թ. բյուջեի հիմքում դրված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները՝


Աղյուսակ 1. 2020թ. բյուջեի հիմքում դրված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները, %

Ցուցանիշ	Փաստ	Փաստ	Կանխատեսում	Կանխատեսում
	2017	2018	2019	2020
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	5,564.5	6,005.1	6,566.5	7,095.1
Տնտեսական աճ (ՀՆԱ-ի իրական աճ)	7.5	5.2	6.3	4.9
Սպառման մակարդակ (Սպառում/ՀՆԱ)	92.3	92.7	93.3	92.5
Ներդրումների մակարդակ (Ներդրում/ՀՆԱ)	19.3	22.4	22.3	22.6
ՀՆԱ դեֆլյատոր	2.2	2.5	2.9	3.0
Միջին գնաճ	1.0	2.5	1.7	2.1
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ	-3.0	-9.4	-7.0	-6.0
Արտահանում/ՀՆԱ	37.3	37.5	37.5	39.2
Ներմուծում/ՀՆԱ	49.5	52.9	52.1	52.5
Եկամուտներ/ՀՆԱ	22.2	22.3	23.9	23.9
Հարկային եկամուտներ/ՀՆԱ	20.8	20.9	22.3	22.6
Ծախսեր/ՀՆԱ	27.0	24.1	24.5	26.2
Պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ	-4.8	-1.8	-0.6	-2.3

ՀՀ ՀԱՄԱԽԱՄԲՎԱԾ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

2020թ. պետական բյուջեի մասին օրենքով համախմբված բյուջեն գնահատվում է եկամուտների գծով 1,740.8 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումներից ստացվող մուտքերի), ծախսերի գծով՝ 1,901.5 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումների), իսկ դեֆիցիտը (պակասուրդը) կազմում է 160.7 մլրդ դրամ:

Գծապատկեր 1. 2018-2020թթ. համախմբված բյուջեների գնահատումը, մլրդ դրամ¹



2020թ. 2019-ի համեմատ կաճեն ինչպես եկամուտները, այնպես էլ ծախսերը: Ծախսերի 12.4% աճը կուղեկցվի եկամուտների 13.1% աճով: 2019թ. 2018-ի համեմատ ծախսերը ավելացել են՝ 12.7%-ով, եկամուտները՝ 14.6%-ով: Հարկ է նշել, որ 2020թ. ծախսերի աճի տեմպը նախորդ տարվա համեմատ կնվազի 0.3 տոկոսային կետով, իսկ եկամուտների աճի տեմպը կնվազի 1.5 տոկոսային կետով:


2020թ. բյուջեով նախատեսվում է 160.7 մլրդ դրամ դեֆիցիտ, որը 2019-ի համեմատ 9.1 մլրդ-ով կամ 6.0%-ով ավելի է:

¹ Համախմբված բյուջեի եկամուտներն ու ծախսերը դիտարկվում են առանց միջբյուջետային փոխանցումներից ստացվող մուտքերի:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

2020թ. պետական բյուջեի եկամուտները կկազմեն շուրջ 1,695.0 մլրդ դրամ, ծախսերը՝ 1,855.7 մլրդ դրամ, իսկ դեֆիցիտը՝ 160.7 մլրդ դրամ: Այսինքն՝ և՛ ծախսերը, և՛ եկամուտները, և՛ դեֆիցիտը աճել են նախորդ տարվա համեմատ:


Գծապատկեր 2. 2017-2020թթ. պետական բյուջեների համեմատականը, մլրդ դրամ



Թեև պետական բյուջեի եկամուտները 2020թ. կաճեն, այդուհանդերձ, վերջիններիս տեսակարար կշիռը ՀՆԱ-ում չի փոխվի: 2020թ. 2019-ի համեմատ եկամուտների մասնաբաժինը ՀՆԱ-ում կմնա անփոփոխ՝ կազմելով 23.9%:


ՀՀ պետական բյուջեի եկամուտները

Գծապատկեր 3. 2017-2020թթ. պետական բյուջեների եկամուտների համեմատականը



2020թ. պետական բյուջեի եկամուտների մեծ մասը՝ 94.5%-ը կազմում են հարկային եկամուտները և պետական տուրքերը, որը նախորդ տարվա նկատմամբ աճելու է 1.1 տոկոսային կետով: Պաշտոնական դրամաշնորհների տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատ կնվազի 0.4 տոկոսային կետով և կկազմի ՀՀ 2020թ. պետական բյուջեի եկամուտների 2.1%-ը, իսկ այլ եկամուտների կշիռը կնվազի 0.7 տոկոսային կետով՝ կազմելով 3.4%:


Գծապատկեր 4. ՀՀ 2017-2020թթ. պետական բյուջեի եկամուտները, %



Պետական բյուջեի գերակշիռ մասը կազմող հարկերն ու տուրքերը 2020թ. կկազմեն 1602.3 մլրդ դրամ՝ 2019-ի սպասվող ցուցանիշի նկատմամբ աճելով 9.5%-ով: 2019թ. սպասվող հարկերը 2018-ի նկատմամբ կաճեն 16.4%-ով:

Արդյունքում 2019թ. հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը կբարելավվի 1.4 տոկոսային կետով, սակայն 2020-ին այս ցուցանիշի աճը չի լինի այդքան բարձր և կկազմի ընդամենը 0.3 տոկոսային կետ: Հարկ է նշել, որ 2019թ. հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարելավման բարձր ցուցանիշը պայմանավորված է նաև ավտոմեքենաների ներմուծման աննախադեպ քանակի արդյունքում ստացվող մեծ ծավալով հարկային եկամուտներով, որը հաջորդ տարի այլևս չի լինի:


Գծապատկեր 5. ՀՀ 2017-2020թթ. պետական բյուջեի հարկային եկամուտները



ՀՀ պետական բյուջեի ծախսերը

Ինչպես արդեն նշեցինք, ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրավորվել է շուրջ 1,855.7 մլրդ դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի 84.5%-ը կամ 1,568.0 մլրդ դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, 15.5 %-ը կամ 287.7 մլրդ դրամը՝ կապիտալ ծախսերին (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ): Հարկ է նաև նշել այն փաստը, որ ըստ ՀՀ 2020թ. պետական բյուջեի նախագծի՝ ՀՀ 2019թ. պետական բյուջեի սպասվող ցուցանիշների համեմատ ընդհանուր ծախսերը կավելանան շուրջ 246.2 մլրդ դրամով կամ 15.3%-ով:

Գծապատկեր 6. ՀՀ 2017-2020թթ. բյուջեների ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ




2020թ. պետական բյուջեից վճարման ենթակա տոկոսավճարները կազմում են 168.0 մլրդ դրամ, իսկ ընթացիկ ծախսերն առանց տոկոսավճարների կկազմեն 1,400.0 մլրդ դրամ: Ըստ հարկաբյուջետային կանոնների, եթե պետական պարտքի մակարդակը ՀՆԱ-ի նկատմամբ բարձր է 50%-ից, ապա ընթացիկ ծախսերի՝ առանց տոկոսավճարների աճը չպետք է գերազանցի նախորդ 7 տարիների ՀՆԱ-ի անվանական աճերի միջին մակարդակը²: Վերջինս կազմել է 6.9% (2012-2018թթ. միջին), հետևաբար, ընթացիկ ծախսերն առանց տոկոսավճարների չպետք է ավելի լինեին 1,320 մլրդ դրամից: Սակայն, ինչպես արդեն նշվել է, դրանք նախատեսվել են մոտ 80.0 մլրդ դրամով ավելի, ինչը նշանակում է, որ բյուջեի նախագծով խախտվում են հարկաբյուջետային կանոնները, որոնք, ի դեպ, ինչպես նշվում է բյուջեի ուղերձի մի շարք հատվածներում, հանդիսանում են բյուջեի նախագծի հիմքը:

Եթե դիտարկենք պետական բյուջեի ծախսերն ըստ ծառայությունների խոշորացված խմբերի, ապա կտեսնենք, որ ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում ընդհանուր նշանակության պետական ծառայություններին և սոցիալական ծառայություններին: 2020թ. 2019-ի համեմատ ընդհանուր նշանակության պետական

² «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 21, մաս 8.4, կետ «ա», ՀՀ կառավարության՝ 2018թ. օգոստոսի 29-ի N 942-Ն որոշում, մաս 1, կետ 1:

ծառայություններին ուղղված ծախսերը կապելանան 54.4 մլրդ դրամով կամ 7.1%-ով, սոցիալական ծառայություններին ուղղված ծախսերը 2020թ. 2019-ի համեմատ կապելանան՝ 89.5 մլրդ դրամով կամ 12.6%-ով, տնտեսական ծառայություններին ուղղված ծախսերը 2020թ. 2019-ի համեմատ կաճեն 67.4 մլրդ դրամով կամ 41.3 %-ով: Իսկ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդը 2020թ. 2019-ի հետ համեմատաժ կնվազի 42.0%-ով:

Գծապատկեր 7. 2017-2020թթ. ըստ ծառայությունների խոշորացված խմբերի պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը, %




Աղյուսակ 2. 2017-2020թթ. պետական բյուջեի ծախսերն ըստ ծառայությունների խոշորացված խմբերի, մլրդ դրամ

	2017թ. փաստացի	2018թ. փաստացի	2019թ. Բյուջե	2020թ. հաստատված
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝	1,504.8	1,447.1	1,648.1	1,855.7
Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ	691.7	640.1	767.8	822.2

Տնտեսական ծառայություններ	147.54	129.6	163.3	230.7
Սոցիալական ծառայություններ	642.56	643.1	708.2	797.7
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	23.02	34.3	8.8	5.1

2020թ., ինչպես նախորդ տարիներին, բյուջետային ծախսերի ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում սոցիալական պաշտպանությանը և ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին: 2020թ. 2019-ի հետ համեմատած՝ 1.7%-ով նվազել են պաշտպանությանն ուղղված ծախսերը, շուրջ 14.6%-ով ավելացել են ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին ուղղված ծախսերը, 9.9%-ով ավելացել են հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեությանն ուղղված ծախսերը:


**Գծապատկեր 8. 2017-2020թթ. ընդհանուր նշանակության պետական
ծառայությունների գծով ծախսերը, մլրդ դրամ**



Պետական բյուջեից հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեությանը ուղղված ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2020թ. կկազմի մոտ 2.1%, որը 2019-ի համեմատ գրեթե չի փոխվի: Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին ուղղվող ծախսերը կկազմեն 5.1%՝ 2019-ի համեմատ ավելանալով


մոտ 0.4 տոկոսային կետով, իսկ պաշտպանությանն ուղղվող ծախսերը՝ 4.3%՝ նվազելով 0.3 տոկոսային կետով:

Գծապատկեր 9. 2017-2020թթ. Ընդհանուր նշանակության պետական ծառայությունների գծով ծախսերի կշիռը ՀՆԱ-ում, %



Իր հերթին՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների մեծ մասը՝ 46.5%-ը բաժին է ընկնում պետական պարտքի սպասարկմանը, որի կշիռը ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների մեջ 2018թ. 2017-ի համեմատ աճել է 6.3 տոկոսային կետով, 2019թ. 2018-ի համեմատ աճել է 0.2 տոկոսային կետով, իսկ 2020թ. 2019-ի համեմատ նվազելու է 3.6 տոկոսային կետով՝ կապված ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին ուղղված ծախսերի ավելացման հետ:

Գծապատկեր 10. Տնտեսական ծառայությունների գծով ծախսեր, մլրդ դրամ




2020թ. նախորդ տարվա համեմատ նախատեսվում է վառելիքի և էներգետիկայի ճյուղին ուղղված ծախսերի նվազում: 2019թ. դրանք կազմել էին 16.6 մլրդ դրամ, իսկ 2020թ. կնվազեն մինչև 4.8 մլրդ դրամ, այսինքն՝ կնվազեն 71.1%-ով կամ 11.8 մլրդ դրամով:

2020թ. 2019-ի համեմատ ծախսերի աճ է նախատեսվում շրջակա միջավայրի պաշտպանության, գյուղատնտեսության և անտառային տնտեսության, ինչպես նաև տնտեսական այլ ծառայությունների գծով: 2020թ. շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 3.4%-ով կամ 0.4 մլրդ դրամով, գյուղատնտեսությանը և անտառային տնտեսությանն ուղղված ծախսերը՝ 11.8%-ով կամ 2.1 մլրդ դրամով, իսկ տնտեսական այլ ծառայություններին ուղղված ծախսերը 2020թ. նախորդ տարվա համեմատ կաճեն 18.8%-ով կամ 3.1 մլրդ դրամով: Տնտեսական ծառայությունների կշիռները ՀՆԱ-ում նախորդ տարիների հետ


համեմատած կրել են որոշակի փոփոխություններ: Գյուղատնտեսությանը և անտառային տնտեսությանը, շրջակա միջավայրի պաշտպանությանը և տնտեսական այլ ծառայություններին ուղղված ծախսերի կշիռը ՀՆԱ-ում նախորդ տարվա համեմատ կրել է չնչին փոփոխություններ: Ջրային տնտեսությանը և տրանսպորտին ուղղված ծախսերի կշիռները ՀՆԱ-ում 2020թ. 2019-ի համեմատ աճել են համապատասխանաբար 0.25 և 0.68 տոկոսային կետով, իսկ էներգետիկային ուղղված ծախսերը նախորդ տարվա համեմատ ունեն նվազման միտում՝ 0.18 տոկոսային կետով:

Գծապատկեր 11. Տնտեսական ծառայությունների գծով ծախսերի կշիռը ՀՆԱ-ում, %



Սոցիալական ծառայությունների գծով ծախսերի մեծ մասը 2020թ. պետական բյուջեով բաժին է ընկնում սոցիալական պաշտպանությանը (492.0 մլրդ դրամ կամ 61.7%-ը) և կրթությանը (161.1 մլրդ դրամ կամ 20.2%-ը): 2020թ. սոցիալական ծառայություններին բաժին ընկնող ծախսերը 2019-ի համեմատ բոլոր կատեգորիաներով աճ է գրանցել: Այսպես՝ առողջապահությունը, որի դեպքում աճը 2019-ի համեմատ կազմել է 24.0%, 2018-ի համեմատ՝ 42.8%, սոցիալական պաշտպանությունը, որին ուղղված ծախսերը 2019-ի նկատմամբ կաճեն 10.7%-ով, 2018-ի նկատմամբ՝ 18.1%-ով, կրթությանն ուղղված ծախսերը 2020թ. պետական բյուջեով 2019-ի համեմատ կաճեն 13.5%-ով, իսկ 2018-ի համեմատ՝ 32.5%-ով, հանգստի, մշակույթի և կրոնի կատեգորիային ուղղված ծախսերը 2019-ի համեմատ կաճեն 2.0%-ով, իսկ 2018-ի համեմատ կաճեն՝ 22.1%-ով:

Գծապատկեր 12. Սոցիալական ծառայությունների գծով ծախսերը, մլրդ դրամ



2020թ. կրթությանն ուղղված ծախսերի նպատակաուղղվածությունը համընկնում է 2019-ի բյուջետային ուղերձով սահմանվածին: 2020թ., ինչպես նախորդ տարի, հիմնական նպատակը հանրակրթության ոլորտում շարունակվող հիմնական բարեփոխումներն են, որոնց նպատակն է միջնակարգ կրթության որակի բարձրացումը, բնակչության բոլոր խավերի համար որակյալ կրթության մատչելիության ապահովումը միջնակարգ դպրոցի բոլոր մակարդակներում: Կրթության ոլորտին ուղղված ծախսերի մեծ մասը նպատակ է հետապնդում 2020-ին շարունակել նախորդ տարիներին մեկնարկած մի շարք ծրագրեր, որոնցից հատկանշական են.

- Շարունակվելու են տարրական դասարանների աշակերտներին, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին, ինչպես նաև, սկսած 2020 թվականից, սահմանամերձ համայնքների սովորողներին նույնպես անվճար դասագրքերով ապահովելու քաղաքականությունը: Այս միջոցառման գծով 2020թ. նախատեսվում է հատկացնել 780.3 մլն դրամ՝ 2019-ի 1,077.9 մլն դրամի դիմաց, ինչի արդյունքում ծախսերի նվազումը կկազմի 297.6 մլն դրամ:

- Շարունակվելու են հանրապետության դպրոցների ինտերնետային ցանցի սպասարկման և համակարգչային սարքավորումների պահպանման, շարժական ինտերնետային կայանի շահագործման աշխատանքները, իրականացվելու են հեռավար կրթության լիարժեք ներդրմանն ուղղված քայլերը:

- Աստիճանաբար կբարձրացվի ուսուցիչների նվազագույն աշխատավարձը՝ միջնաժամկետ հատվածում այն հասցնելով շնչային ՀՆԱ-ի մակարդակին: ՀՀ 2020թ. պետական բյուջեի նախագծով մանկավարժների աշխատավարձի ֆոնդի գծով ծախսերի աճը նախատեսվել է 9,382.1 մլն դրամի չափով, որից 5,861.3 մլն դրամը՝ աշխատավարձերի բարձրացման գծով նախատեսված 10 տոկոս աճն է:

- «Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովում» ծրագրի շրջանակում սննդով կապահովվեն ՀՀ Արարատի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի, Շիրակի մարզերի և 2019թ. սեպտեմբերին ավելացած՝ Արագածոտնի մարզի, ինչպես նաև 2020թ. սեպտեմբերից՝ Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում և նախակրթարաններում ընդգրկված երեխաները, հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում և նախակրթարաններում ընդգրկված երեխաների սննդով ապահովման գծով նախատեսվել է 1,662.9 մլն դրամ՝ 2019 թվականի 1,121.9 մլն դրամի դիմաց, այսինքն՝ այդ ուղղությամբ ծախսերն աճել են 541 մլն դրամով:

- Շարունակվելու են արտադպրոցական կրթական նոր ծրագրերի մշակման և ներդրման գործընթացները, ինչի հիմքը դրվել է նախորդ՝ 2019 թվականին, և ինչը առանձնահատուկ նշանակություն ունի՝ հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական, ստեղծագործական կարողությունների զարգացման վրա, այս գծով 2020թ. նախատեսվել է 4,546.4 մլն դրամ՝ 2019 թվականի 4,132.3 մլն դրամի դիմաց, ծախսերի աճը կազմում է 414.1 մլն դրամ:

- Առաջնային են լինելու նախադպրոցականից մինչև հետբուհական կրթության որակի, մասնավորապես՝ սովորողների, միջավայրի, ծրագրերի և ուսումնական նյութերի բովանդակության, գործընթացների, ինչպես նաև վերջնարդյունքների որակի բարելավումը՝ ըստ ներպետական և միջազգային ցուցիչների:

- Սեյսմիկ և այլ վտանգների տեսանկյունից իրականացվելու են աշխատանքներ՝ կապված դպրոցների շենքերի բարելավման, աղետներին պատրաստվածության ու արձագանքման կարողությունների հզորացման ուղղություններով:

- Սփյուռքի հետ տարվող աշխատանքները հիմնականում ուղղված կլինեն աջակցելու սփյուռքի կրթօջախների գործունեությանը՝ նպաստելով հայապահպանման խնդիրների լուծմանն ու միջմշակութային երկխոսության զարգացմանը:

Առողջապահության ոլորտում իրականացվող քաղաքականությունը 2020 թվականին ուղղված է լինելու հանրային առողջապահական ծառայությունների հզորացմանը, հիվանդությունների կանխարգելմանը, առողջ կենսակերպի համար


պայմանների ստեղծմանը: Առողջապահության ոլորտի գործունեության բարելավման և զարգացման քաղաքականությունը միտված է ապահովելու յուրաքանչյուր քաղաքացու առողջության պահպանման սահմանադրական իրավունքը՝ բուժօգնության տրամադրման հավասարություն, արդարություն, մատչելիություն, բժշկական օգնության որակի ապահովում: Պետական առողջապահական ծախսերի նպատակայնության հետևողական բարձրացման, հատկացվող ֆինանսական միջոցների վերահսկման և մատուցվող ծառայությունների որակի կառավարման գործուն մեխանիզմների շարունակական բարելավման շնորհիվ առողջապահական համակարգի շահառուն ստիպված չի լինի հավելյալ վճարել պետության կողմից անվճար և արտոնյալ պայմաններով մատուցվող ծառայությունների համար և կստանա որակյալ բժշկական օգնություն և ծառայություններ: Անվճար բժշկական օգնությունը պետք է տրամադրվի միայն սոցիալական արդարության սկզբունքի հիման վրա: Միաժամանակ պետությունը պետք է կանգնած լինի անհետաձգելի բժշկական օգնության կարիք ունեցող ցանկացած մարդու կողքին: Առողջապահական կադրային ներուժի ապահովման ոլորտում իրականացվելու են աշխատանքներ բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական բարելավման ուղղությամբ:

2020թ. սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսերի վերջնանպատակն է՝ պետական միջոցների շրջանակում շահառուներին մատուցվող խնամքի ծառայությունների շարունակականության ապահովումը, շահառուներին մատուցվող ծառայությունների որակի բարելավումը, խնամքի ծառայությունների համայնքային այլընտրանքային ծառայությունների ընդլայնումը: 2020 թվականին նախատեսվում է պետական նպաստների քաղաքականության մեջ շարունակել ընտանիքների անապահովության գնահատման ծրագրի հասցեականության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, մասնավորապես՝ առցանց եղանակով ստացվող անհրաժեշտ տվյալների շրջանակի հնարավոր ընդլայնում, համադրումներ տարբեր տեղեկատվական բազաների տվյալների հետ՝ նպաստառության ոչ ենթակա ընտանիքների հայտնաբերման նպատակով³: 2020

³ 2020 թվականին ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստ կտրամադրվի շուրջ 100.0 հազ. ընտանիքների, իսկ նպաստի միջին ամսական չափը կկազմի 31442.2 դրամ: Հաշվի առնելով երեխաներին սոցիալական աջակցություն տրամադրելու առաջնահերթության սկզբունքը՝ նախատեսվում է ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստ ստացող ընտանիքների թվում երեխա ունեցող ընտանիքների թիվը պահպանել առնվազն 75%-ի սահմաններում: ՀՀ վիճակագրական կոմիտեի 2017 թվականի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության տվյալների համաձայն, եթե հանրապետությունում 2017 թվականին չիրականացվեր ընտանեկան նպաստի ծրագիրը, ապա ծայրահեղ աղքատությունը կավելանար շուրջ 2.5 անգամ՝ կազմելով 3.5 %՝ 1.4 %-ի դիմաց, և աղքատության մակարդակը՝ 28.3%՝ 25.7 %-ի դիմաց:

թվականին պետական քաղաքականության իրականացման շրջանակներում առանձնահատուկ կարևորություն է տրվելու աշխատաշուկայում անմրցունակ խմբերի, այդ թվում՝ երիտասարդների, ավելի ինտենսիվ ներգրավմանը: 2020 թվականին ՀՀ կառավարությունը նպատակադրել է՝ պարբերաբար բարձրացնել պետական կենսաթոշակների չափերը՝ ապահովելով գնաճի նկատմամբ միջին կենսաթոշակի չափի առաջանցիկ աճ: Մասնավորապես, նախատեսվում է կենսաթոշակի միջին ամսական չափի աճ շուրջ 10 տոկոսով: Կշարունակվեն «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի արդիականացման աշխատանքները՝ որոշումների կայացման գործընթացի ավտոմատացման, այլ տեղեկատվական համակարգերից ինքնաշխատ եղանակով ստացվող և կիրառվող տեղեկատվության (տվյալների) շրջանակի ընդլայնման, կենսաթոշակային ապահովության և պետական նպաստների բնագավառի կառավարման համակարգի արդյունավետության բարելավման նպատակով:

Գծապատկեր 13. Սոցիալական ծառայությունների գծով ծախսերի կշիռը ՀՆԱ-ում, %



Սոցիալական ծառայությունների գծով ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2020թ. կրեւն որոշակի փոփոխություններ՝ 2019-ի հետ համեմատած: Դա կապված է սոցիալական ծառայությունների առանձին ճյուղերին ուղղված ծախսերի ավելացման հետ: Մասնավորապես, Սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսերի


տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2019-ի հետ համեմատած՝ 2020թ. կավելանա 0.3 տոկոսային կետով, Կրթությանն ուղղված ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կավելանա 0.2 տոկոսային կետով, հանգստի, մշակույթի և կրոնի ճյուղին ուղղված ծախսերի տեսակարար կշիռը 2019-ի համեմատ գրեթե չի փոխվի, իսկ առողջապահությանն ուղղված ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կավելանա 0.2 տոկոսային կետով:

ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերի ընդհանուր գումարը (առանց այս ոլորտում իրականացվող նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերի) ՀՀ 2020թ. պետական բյուջեում ծրագրավորված է 128.0 մլրդ դրամի չափով, որը 2018թ. բյուջետային տարվա փաստացի և 2019թ. բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների նկատմամբ կազմում է համապատասխանաբար 122.8% և 108.7%: Օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերի 97.0%-ը կամ 124.1 մլրդ դրամը կազմում են ընթացիկ ծախսերը, իսկ 3.0%-ը կամ 3.9 մլրդ դրամը բաժին է ընկնում ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնություններին: Օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերի 68.3%-ը բաժին է հասնում աշխատողների աշխատավարձի ֆոնդին, որը 2020 թվականի համար ծրագրավորվել է 87.4 մլրդ դրամի չափով, այն 2019 թվականի ծրագրավորվածից ավելի է 6.1 մլրդ դրամով կամ 7.5%-ով: Միաժամանակ, բոլոր մարմինների համար նախատեսվել է պարգևատրման ֆոնդ, որը պետական ծառայողների պարգևատրման ֆոնդի հետ միասին կազմում է հիմնական աշխատավարձի ֆոնդի 30%-ը կամ 26.2 մլրդ դրամ: ՀՀ 2020թ. պետական բյուջեում պետական մարմինների պահպանման ծախսերը հաշվարկվել են հիմք ընդունելով 19709 հաստիքային միավորների քանակը, որը 2019-ի համեմատ ավելացել է 517 միավորով: Հարկ է նշել այն փաստը, որ պետական համակարգի աշխատավարձերի ֆոնդի ավելացումը և աշխատողների թվաքանակի ավելացումը, չի համապատասխանում կառավարության հայտարարած պետական համակարգի օպտիմալացման ծրագրերին: Նշենք նաև, որ «Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին» միջոցառման համար նախատեսվում է հատկացնել 800.0 մլն դրամ՝ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով հաստատված 928.9 մլն դրամի դիմաց կամ 128.9 մլն դրամով պակաս:

ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը


ՀՀ 2020թ. պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի գումարը ծրագրավորվում է 160.7 մլրդ դրամի չափով, որը կազմում է ՀՆԱ-ի 2.3%-ը: Դեֆիցիտի ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել ներքին և արտաքին աղբյուրների զուտ մուտքերի հաշվին (զուտ մուտքերը՝ դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներգրավվող միջոցների մուտքերի ընդհանուր գումարի և փոխառու միջոցների տրամադրման կամ մարման ընդհանուր գումարի տարբերությունն է): Այսպես, 2020թ. պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման համար ներքին աղբյուրներից կառավարությունը ներգրավելու է շուրջ 211.3 մլրդ դրամ, որը կազմում է դեֆիցիտի 131.5%-ը: Այսինքն՝ պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը 2020-ին ամբողջությամբ բաղկացած է լինելու ներքին աղբյուրներից: Արտաքին աղբյուրներից զուտ ներգրավված միջոցները կազմելու են -50.6 մլրդ դրամ, ինչը նշանակում է, որ կառավարության արտաքին պարտավորություններն այդքանով նվազելու են: Համեմատության համար նշենք, որ 2019թ. պետական բյուջեի պակասուրդի 64.3%-ը նախատեսվել էր ֆինանսավորել արտաքին, իսկ 35.7%-ը՝ ներքին աղբյուրների հաշվին:

Գծապատկեր 14. 2017-2020թթ. պետական բյուջեի դեֆիցիտը և ֆինանսավորման աղբյուրները, %



Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից 2020 թվականին ակնկալվում է ստանալ 35.3 մլրդ դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ և 171.7 մլրդ դրամի չափով վարկեր: Ընդ որում, պաշտոնական դրամաշնորհների մեծ մասը՝ 27.6 մլրդ դրամը, կազմելու են ծրագրային դրամաշնորհները: Համաձայն կանխատեսումների՝ ծրագրային ժամանակահատվածում, ի տարբերություն նախորդ տարիների, արտաքին օժանդակության կառուցվածքում գերակշռելու են նպատակային ծրագրերի ֆինանսավորման համար նախատեսված բյուջետային աջակցության պաշտոնական դրամաշնորհներն ու վարկերը (96.3%):

Գծապատկեր 15. 2020թ. ակնկալվող արտաքին օժանդակությունն ըստ բնույթի




Բյուջետային փաթեթում ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակության թերստացման պայմաններում ծախսերի ծրագրի վերանայման անհրաժեշտության առաջացման դեպքում այդ վերանայումն իրականացվելու է՝ ելնելով ծախսերի գերակայության աստիճանից:

ՀՀ պետական պարտքը

ՀՀ 2020թ. պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումների համաձայն՝ 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կկազմի 3,492 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 53.2%-ը, իսկ 2020 թվականի տարեվերջին այն կկազմի 3,636 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 51.2%-ը:

ՀՀ կառավարության պարտքը, ըստ կանխատեսումների, 2019թ. տարեվերջին կկազմի 3,257 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 49.6 տոկոսը, իսկ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այն կկազմի 3,419 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 48.2 տոկոսը, որը 2019թ. նկատմամբ կնվազի 1.4 տոկոսային կետով:

Գծապատկեր 16. ՀՀ պետական պարտքը



ԱՄՓՈՓՈՒՄ

2020թ. պետական բյուջեով նախատեսվում է և՛ եկամուտների, և՛ ծախսերի աճ ինչպես 2019թ. բյուջեի, այնպես էլ 2019-ի սպասվող ցուցանիշների նկատմամբ: Սակայն սա աննախադեպ երևույթ է, քանի որ յուրաքանչյուր տարի պետական բյուջեի ցուցանիշները պետք է նախատեսվեն աճով՝ առնվազն ՀՆԱ-ի աճին համապատասխան: Կարևոր է հասկանալ՝ արդյոք ՀՆԱ-ի նկատմամբ բյուջեի ցուցանիշները աճում են, թե՞ ոչ, որպեսզի հնարավոր լինի պատկերացում կազմել որևէ ոլորտում պետական բյուջեի մասնակցության աճի մասին:

Այս առումով, 2020թ. բյուջեով նախատեսվում է հարկային եկամուտների բավական ցածր աճ՝ ընդամենը ՀՆԱ-ի 0.3 տոկոսի չափով: Սա ավելի ցածր է, քան նախկին կառավարությունների ծրագրերով սահմանվող տարեկան 0.5 տոկոսային

կետ աճը: Իսկ ծախսերը ՀՆԱ-ում աճելու են՝ 24.5 տոկոսից դառնալով 26.2 տոկոս: Մինչդեռ ծախսերի աճն ունի խնդրահարույց կետեր:

Նախ՝ նախատեսվում է կապիտալ ծախսերը 2019թ. 2.8 տոկոսից (ՀՆԱ-ի նկատմամբ) հասցնել 4.1 տոկոսի: Եթե հաշվի առնենք ընթացիկ տարվա, ինչպես նաև նախորդ տարվա կապիտալ ծախսերի կատարողականը, ապա կարող ենք կանխատեսել, որ 2020-ին դրանք նույնպես զգալի չափով թերակատարվելու են, քանզի կապիտալ ծախսերի իրականացման արդյունավետության բարձրացմանն ուղղված որևէ կառուցվածքային փոփոխություն չի իրականացվել և չի նախատեսվում: Արդյունքում, ինչպես ընթացիկ տարում, 2020-ին նույնպես, հարկերի տեսքով տնտեսությունից հավաքագրվելու են դրամական միջոցներ և չեն ծախսվելու: Այս դեպքում կառավարությանը չի հաջողվելու ապահովել տնտեսության վրա հարկաբյուջետային քաղաքականության ընդլայնող ազդեցությունը:

Հաջորդ հիմնախնդիրը հարկաբյուջետային կանոնների խախտումն է: Ինչպես արդեն նշվել է, ընթացիկ ծախսերը չպետք է պլանավորվեին նախորդ 7 տարիների փաստացի ՀՆԱ-ների անվանական աճերի միջին մակարդակից բարձր աճով: Սակայն, 2020թ. բյուջեով այս կանոնը չի պահպանվել: Կառավարությունը կանոնի խախտումը բացատրում է աշխատավարձերի և սոցիալական ծախսերի բարձրացման անհրաժեշտությամբ: Սակայն հարկ է նշել, որ կանոնի հիմնական տրամաբանությունը կայանում է հենց նրանում, որ կարճաժամկետ եկամուտների հաշվին չպետք է նախատեսվեն պերմանենտ ծախսեր, ինչպիսիք են աշխատավարձերի աճերը կամ կենսաթոշակների բարձրացումը: Կանոնի խախտումը, առաջին հերթին վտանգի տակ է դնում հարկաբյուջետային քաղաքականության վստահելիությունը, ինչպես նաև վտանգներ է ստեղծում ապագայում պետական պարտքի կայունությունն ապահովելու տեսանկյունից:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: